

Եկեղեցւոյ վարդապետութեան հեղինակութեան և ազբեւրե  
բացարձակ խոստովանելը, հակա—հերիտելուական վիճաբա-  
նութիւնը, անկատածելի մեծ ժառայութիւններ են ընտ-  
դրական քննադատութեան նկատմամբ եկեղեցական գիտու-  
թեան համար, քարտգները և խրատական աշխատութիւնները,  
լուսափայլ անձնաւորութեան և բարեգործ կեանքի տպաւո-  
րութիւնը պատկանած խոստովանովի փառքով—այդ բոլորը  
ջլատում էր Աղեքսանդրիայում Որոգինէսի դէմ եղած ժողով-  
ների քանադրութեանց նշանակութիւնը գեռ ևս նրա կեանքի  
ժամանակ և թէ իրեն և թէ իւր աստուածաբանական հա-  
յեացքսերի համար քանում է ազդեցութիւն եկեղեցւոյ Հայն  
շրջանների վերայ: Սակայն փելիսովիայական տարրի գերա-  
կշուութիւն նրա աստուածաբանութեան մէջ և աստուածաբա-  
նական վարդապետութեան մէջ նրան ուղեկցող նիւթական  
թերութիւնները առաջ բերին ընական պահանջ հինց Որոգինէ-  
սին «Եկեղեցականացնելու»,» և գեռ VI գարի սկզբում՝ նրա  
սիստեմի մէջ էապէս կարեոր փոփոխութիւններ մտցրին:

(կը շարօւնակուի)

Արքակ վարդապետ

### ԱՆԳՐԻՈՎԿՈՋԻ ՀՈՂԱՑԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Շարունակութիւն

Քանի տիրում էր տոհմապետութիւնը, տոհմապետի և  
տոհմին պատկանողների յարաբերութիւնը ընտանեկան-ազգակ-  
ցական էր: Տոհմապետը կառավարում էր որպէս հայր, տոհմի  
մէջ սոցիալական սրոշ անհաւասարութիւն գեռ գոյութիւն  
չունէր. տոհմի բոլոր առամներն իրար հաւասար, նման իրա-  
ւունքներ ունէին: Մեծանալով առմմը և նոր երկրների (հողերի)  
տիրանալով, տոհմի կողմի մէջ առաջ է գալիս որոշ փոփոխու-  
թիւն: Տոհմապետի իշխանութեան տակ գտնուազներն այլևս  
անխափիր իրար հաւասար չեն, տոհմին պատկանողների և նոր  
ձեռք բերուած երկրների ընակիցների մէջ սրոշ տարբերութիւն  
է գրաւում. առաջինները գերագաւում են, աւելի շատ իրա-  
ւունքներ ունին: Մեր պատմիչների հազորդած տեղեկութիւն-  
ներից իմանում ենք, որ հասարակ ժողովուրդը Հայաստանում  
ոկզբում քաֆանուած էր երկու կարգի—շնականների և գեղ-  
ջուկների: Ենականները նրանք են, որոնք տոհմապետի հետ

արեւնակցական—ազգակցական կապ՝ ունին. իսկ գեղջուկները տոհմի նուաճած երկը բնակիչներն են և ստորագրուած են շինականներին, աւելի շուտ տոհմապետին: Նիսականներ և գեղջուկներ քաժանումը դոյցութիւն ուներ և Արշակունեաց ժամանակ: Նիսականներն ազատ էին, ունեին իրենց քաղաքական անկախութիւնը և միաժամանակ չեին ենթարկուում նախարարներին: Արշակունի թագաւորներն իրենց հրսվարտակներում նախարարներին (շենացիներին), որպէս քաղաքական անկախ միութիւնների<sup>1:</sup> Գեղջուկներն ընդհակառակը ենթարկուում էին թագաւորին կամ նախարարներին: Բայց նրանց գրութիւնն էլ այնքան ծանր չէր, նրանք ունեին շարժական և անշարժ սեփականութեան իրաւունք: Պէտք է նկատել, որ Հայաստանում տարկութիւնը ընդհանրապէս խոր արմատներ չեն գույնեալ և պատմութիւնից գետենք, որ շատ գերեներ, անազատներ հետզհետէ նոյն իրաւունքներն են ձեռք բերել, ինչ որ շինականներն ունեին<sup>2:</sup>

Նախարարներին ոկզբում պատկանում էին գիւղերը, տիրապետական իրաւունք միայն գրանց վրայ ունեին, իսկ շեներն ազատ, անկախ էին: Բայց հետզհետէ շինակները ըախտակից են դառնում գեղջուկներին: Նախարարներն ու թեղանալով, շատ հողեր ձեռք բերելով իրենց տիրապետութիւնը տարածում են և շեների վրայ: Իրենց յայտարարում են երկրե տէր: Թէ ինչի մէջ էր կայանում այդ տէրութիւնը, ժամանակուրդն գէպի նախարարներն ինչ պարտականութիւններ ուներ, յայտնի չէ:

Արշակունեաց ժամանակ երեք տեսակ գիւղացիութիւն գոյութիւն ունէը.—1. պետական—թագաւորական, 2. եկեղեցական և 3. նախարարական: Պետական գիւղացիները, ըստ երեսյթին, կօչուում էին ազատ գիւղացիներ: Դիւղերի գլխաւորն էր հազարապետը, որը մեծ մասամբ հարկեր էր ժողովում: Գիւղերի վրայ հսկում էին գործակալները, իսկ գիւղի կառավարիչն էր գիւղապետը կամ զաօապետը<sup>3:</sup> Թէ արշակունեաց ժամանակ ինչ տեսակ հարկեր գոյութիւն ունեին, ճշտութեամբ յայտնի չէ: Ըստ Ն. Ադոնցի պէտք է նոյն հարկերը եղած լինեն, ինչ որ պարտականութիւններ ուներ, յայտնի չէ:

1) Բահամբեան—Անձնական եւ հողային իրաւունքը ին Հայաստանում, եր. 48—50.

2) Գարազաշեան ա. ա. Օ. Բ. մաս եր. 40.: Բահամբեան ա. ա. Օ. եր. 42.

3. Հ. Ածոնց—ա. ա. Օ. եր. 484.

պարսից տիրապետութեան ժամանակ յիշում է հետեւալ հարկերը. մուտ, սակ, բաժ և հաս: Ա. Աղոնցը մուտը համարում է սակի քացտրութիւնը, իսկ հասը՝ բաժի: Սակ և բաժ խօսքերը պարսկական ծագում ունին: Բաժը պէտք է հողային հարկը եղած լինի, իսկ սակը՝ գլխահարկ: Բացի սրանցից, դոյսութիւն ունէին և ուրիշ հարկեր, այսպէս օրինակ՝ կոռ և բեկառ: Առաջինը պէտք է համարել անձնական ծառայութիւն, իսկ երկրորդ՝ ընական բերքերի տուրք: Պարսկց տիրապետութեան ժամանակ հայեցից վերցնում էին և անտառների, արօտաաեղիների, լեռների և ուրիշ հարկեր: Պէտք է ընդունել, որ Արշակունեաց ժամանակ ոոյն հարկերն էլ դոյսութիւն ունէին: Քնդհանուր առմամբ պետական գիւղացիների գրութիւնը պէտք է այնքան էլ ծանր եղած չլինի. Կրանք հարկ էին վճարում մեծ մասամբ պետութեան և մասամբ էլ եկեղեցուն:

Հոգեոր դասը Հայաստանում թէ հեթանոսութեան և թէ քրիստոնէութեան ժամանակ մեծամեծ կալուածների, հարստութեան տէր էր: Հեթանոսութեան ժամանակ քըմերը իշխանների նման ունէին կալուածքներ և զօրք (Դեմիտր և Արծան քրմապետների կռիւն ընդդէմ Ս. Գրիգոր Առևուաւորչի): Քրիստոնէութեան ժամանակ էլ հոգեոր դասը մեծ հարստութիւնների տէր էր: Եկեղեցուն հոգեր էին նուրբել ոչ թէ միայն թագաւորները, իշխաններն, այլ և ուրիշ բարեպաշտ անձինք: Միաժամանակ հոգեորականութեան կալուածքներն այնքան մեծ շափերի էին հասել, որ նոյնիսկ թագաւորները, իշխանները նախանձում էին: Թէ որքան կալուածքների տէր էր հոգեորականութիւնը, գրան փաստ կարող է ծառայել այն, որ միայն Առևուաւորչի տոհմը մօտ 50 դաւառ ունէր: Եկեղեցու, հոգեորականութեան կալուածքների վրայ ընակուող դիւղացիների գրութիւնը բաւական թեթև էր. Նըանք պետական հարկերից ազատ էին և եկեղեցուն վճարում էին տասանորդ. ընդհանրապէս ամենից բարեյաջող պայմանների մէջ էին գտնուում եկեղեցական գիւղացիները: Հոգեորականները բոլոր գիւղացիներից վերցնում էին և եկեղեցական տուրք (պատող): Այդ տուրքի տեսակը և շափը գժբախտաբար յայտնի չէ: Մովսէս Կաղանկայտուացու պատմութեան մէջ կոյ մի յիշատակութիւն, որն այդ խնդրի վրայ բաւական լոյս է սփառում: Կաղանկատուացին յայտնում է, որ Աղուանից եկեղեցական ժողովը Վաշագան թագաւորի օրօք<sup>2)</sup> հետեւալ տուրքերն է որոշել քահանաների

1) Փաւստոս Բիոգանդ Դ. Ժ. Ֆ. Ֆ.

2) Մելիք-Թանգեան. Հայոց եկեղեցական իրաւունքը եր. 402. ա. դիրք.

համար։ «Պտուզք ի ժողովրդին է Երեցուն՝ կարգն այս լիցեաթուանիկն չորս գրիւ ցորեան, վեց գրիւ գարի և մեշտառան վաս քաղցու։ և որ տառապեալն է զհացիդ կէօն տացէ՝ և դինի՝ որչտփ կարողն իցէ։ իսկ որոյ վար և այգի ոչ է, մի՛ տասցեն։ Եւ որոյ ոչխայը է ի տան՝ ոչխար մի և երեք գդար ըուրդ և մեկ պանիր և ոյը ձիք ի տան իցեն՝ մին յովանակ և ոյը պախրէք իցեն՝ որթ մի<sup>1)</sup>։»

Նախարարական գիւղացիների մասին տեղեկութիւններ համարեա թէ չկան։ Շատ հետաքրքիր է իմանալ, թէ գիւղացիները նրանց ինչ հարկեր էին վճարում և արդեօք անձնական ծառայութիւն, ճորտութիւն այդ ժամանակ գոյութիւն ուներ, թէ ոչ։ Հարկերի և տուրքերի վերաբերմամբ պէտք է ընդունել, որ նախարարները նոյն հարկերն էին ստանում, ինչ որ եկեղեցին և թագաւորը, միայն աւելի շատ չափով, որովհետեւ նախարարները իրենց կողմից թագաւորին հարկ էին վճարում։ Այս պատճառով էլ նախարարական գիւղացիները համեմատութէն աւելի աննպաստ պայմանների մէջ էին։ Գույնի Դ. Ժողովի 11-րդ կէտից երեսում է, որ նախարարները ի միջի այլաց և կենդանիների, ուտելիքի և խմելիքի հարկ էլ էին առնում։ «Ոմանք ի ազատաց ի վերա տկարանոցաց իշխանութիւն տռնեն, և որպէս ի կենդանեաց հարկս պահանջեն, և ի կերակուլու և ըմպէլիս իւրեանց գործուկալս մատուցանեն կռուով և պատուհանիւն և զողորմելի եղայրսն չարչարին անխզճաբար<sup>2)</sup>։»

Արդեօք բացի հարկերից նախարարական գիւղացիներն անձնական ծառայութիւններ էլ էին կատարում։ յայտնի չէ։ Մեր պատմիչներն այդ մասին ոչինչ տռանձին չեն յիշատակում։ Պէտք է ընդունել, որ Հայաստանում համարեա թէ նոյն կարգերն էին տիրում (գիւղացիական), ինչ որ հարեան Պարսկաստանում և Բիւզանդիայում։ Արեւելքում, ինչպէս յայտնի է, ֆէօդալիզմն այնպիսի շափերի չհասաւ, ինչպէս Արևմուտքում։ Արեւելքում ֆէօդալիզմը համեմատօրէն աւելի մեղմ էր։ գիւղացիութեան դրութիւնն այնքան էլ ծանր չէր, իսկ ճորտութիւն եւրսպական մտքով գոյութիւն չունէր։ Հայաստանում էլ Արշակունեաց ժամանակ կալուածատիրութիւնը և գրա հետ կապուած ճորտատիրութիւնը գոյութիւն չունէին։ Նախարարութիւնը, ունենալով ընդարձակ հողեր, բաւականանում էր դրանց եկամտով և շունէր այն ձեկ մասնաւոր—սեփական։

1) Մովսէս Կաղանիկայտուացի-պատմութիւն Աղուանից աշխարհի։ Մակուա 1860. եր. 66.

2) Մելիք-Թանգիան ա. ա. Օ. եր. 405 ա. դիրք,

անտեսութիւն, որ տեսնում ենք Արևմուտքում։ Նախարարնեցը համարում էին հողի տէրը և փոխարէն գիւղացիներից ստանում էին որոշ հարկեր և տուրքեր։ Գիւղացիների կախումը՝ նախարարներից անտեսապէս այնքան մեծ չէր։ անձնական ծառայութիւններ մասնակի ընոյթ էին կրում, այնքան տարածուած չէին։ Կարելի է ասել, որ Հայաստանում այդ ժամանակ նոյն հողատիրական կարգերն էին տիրում, ինչոր օրենսդրի միջին դարերում հարաւարեմտեան և միջին Գեղմանիայում։ Գեղմանիայի այդ մասերում գիւղացիք որոշ չափով ազատ էին և միմիայն հարկեր և տուրքեր էին վճարում։ հողատէր իշխաններին։

Բագրատունեաց ժամանակ Հայաստանի քաղաքական—սոցիալական կեանքը խոշոր փոփոխութիւններ չե կրում։ Ամենին ինչ հիմնուած էր հնի վրայ, միայն որոշ տարբերութեամբ։ Բագրատունեաց թագաւորութիւնը թէ ընդարձակութեան և թէ ուժի կողմից համեմատօրէն յետ է Արշակունեացից։ Նախարարութիւններ է կրում։ Նախարարութիւնները նախ՝ սեպհական իրաւունքի հիման վրայ բաժանուել, մանրացել էին և երկրորդ՝ պարսից և արաբացոց տէրութիւնները շատ նախարարութիւններ ոչնչացրել կամ ուժապառ էին արել։ Բայց չնայած սրան նախարարութիւնն իր տռաջուայ գիրքից շոտը ան էր պահել։ Բագրատունեաց ժամանակ էլ նրանք աչքի ընկնող ուժ էին ներկայացնում և դարձեալ խանդարում էին թագաւորութեան ուժեղանալուն։ Բագրատունեաց թագաւորուններն էլ բռնի միջոցների են զիմում նախարարութեան զսպելու համար, բայց յաջողութիւն չեն դանում<sup>1)</sup>։ Բագրատունեաց ժամանակ թագաւորը համարում էր երկրի տէրն ու տնօրէնը։ Նու բացարձակ, միահեծան տէր էր։ Թագաւորն իրաւունք ունէր ընդհանուր հարկեր նշանակելու, նախարարներն թագաւորի վաստաներն էին և որոշ տռատական կախման մէջ էին։ Նրանք պէտք է զօրք տային և հարկ։ Առաջինն այնքան խստիւ չէր պահանջուում, իսկ հարկ չըտալը համարում էր ապստամբութիւն<sup>2)</sup>։ Թագաւորն իր կողմից պէտք է պաշտպանէ նախարարներին, կոռուող կողմերին հաշտեցնի և նրանց չարադրծութիւնները պատժի։ Իրենց իշխանութեան տակ դանուած երկրների վրայ նախարարները մեծ իրաւունքներ ունէին։ հարկ առնել, զօրք տռնել, դատելը տեսնել և այլն։ Իրենց իշխանու-

1) Դ., Խնմիթեան. Հնախօսութիւն հատոր Բ. կը. 87.

2) Դ., Խնմիթեան ա. ա. Օ. հատոր Բ. կը. 87.

թիւնն անցնում էր ժառանգաբարար: Ամենազօրեղ և աչքի ընկնող նախարարութիւններն էին Արծրունեաց և Սիւնեաց<sup>1)</sup>:

Չնայած Բագրատունեաց շրջանը ժամանակով աւելի մօտ է և շատ պատմագիրներ ունի, բայց դարձեալ այն ժամանակուայս սոցիալական կարգերի, ժողովրդի դրութեան մասին շատ քիչ տեղեկութիւններ կան: Մեղ այստեղ ամենաառաջին տեղը հետաքրքրում է այն խնդիրը, թէ գիւղացիութիւնն այդ շրջանում ինչ դրութեան մէջ էր: Խնչպէս մեզ հասած ուսկաւ և կցկոտուք յիշատակութիւններից երեսում է, Բագրատունեաց ժամանակ գիւղացիութեան դրութիւնը համեմատօքէն բաւական վատացել էր: Մխիթար Գօշի գատառաանագրքից իմանում ենք, որ Հայոց մէջ նըա (և Բագրատունեաց) ժամանակ հետեւեալ դատակարգութիւնը գոյութիւն ունէր (ըացառութեամբ հոգեստականութեան): Եշխաններ (նախարարներ), ազատներ, շինականներ, գեղջուկներ և ագարակի ընակիչներ<sup>2)</sup>: Այս շըրջանում շինականների և գեղջուկների մէջ խոշոր տարբերութիւն չըկայ և ըստ երեսութիւն նոյնն են իսկ ագարակի ընակիչներն աւելի ցածր են: Խնչպէս առաջ, նոյնպէս և այս շրջանում երեք տեսակ գիւղացիութիւն կար: Ժագաւարական, եկեղեցական և նախարարական: Եկեղեցական գիւղացիները հնուց նշանակուած տասանորդն էին վճարում և նրանք դրութիւնը բաւական բարւոք եղած պիտի լինի: Թագաւորը և Եշխանները (նախարարները), ըստ Մխիթար Գօշի, ժողովրդից պէտք է հետեւեալ հարկերն առնենին. «Իսկ զհարկս գաւառաց և աղքաց ժագաւարք և Եշխանք արդարութեամբ առցեն. մէ ինչ աւելի քան զառաջնոցն սովորութիւնս կալցին, զի ընդ ամենայնի համարս ունին տալ, զի յԱստուծոյ կարգեցին ի պահպանութիւն և ի փրկութիւն աշխարհի և ոչ ի կործանում: Եւ արդ՝ այսպէս լիցի: Զանտաստանացն զհինգերորդ մասն առցեն, որպէս Յովսէի օրինագրեաց յԵղիպտասս, զի յորժամ ստացաւ զերկերն Փարաւանի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է զի նախ ինքեանցն էր ժառանգութիւն և ոչ էր հինգերորդ, այլ հայրենի կտուք սակաւ: Սոյնպէս և այժմ լիցի. զի արծաթագին անդաստան և այգեստան և ըուրաստան մի լիցին ընդհարկաւ (Հնգեկի), նմանապէս և ջրաղաց և տուն և խանութիւն թէ ընտակիչքն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի հարկիւ-

1) Dagbaschean, H. Qründung des Bagratiden Reiches durch Aschot Bagratuni. Berlin 1893, եր. 78—79.

2) Մխիթար Գօշի Գատառաանագիրը Հայոց. 1880 թ. եր. 547—

յին, զի ոչ է հարկ դլիոյ քըստոնեից, բայց այլազգեաց՝ յորժամ ըռնի ընդ հարկաւ արասցին։ Բայց անգատանք ջրաբ-ըեթ լիցին ընդ հնգեկաւ, այլ սսախնք տասանորդեսցին։ զի հոդ միայն է թագաւորի և իշխանի, և ոչ ջուր. ոյնպէս սսախնք, այդիք և ծառաստանք։

Այսպէս և յաւուրս շաբաթու յեօթնէ մին գործիցի եշ-խանին և աէրունի. այլ աւելի աշխատելն զձեռամք անկետլն անիրաւութիւն մեծ է, եղին առանձինն այլ հարկ մի՛ լիցի, զի այն իսկ է զոր աշխատեալ հնդ եկի։

Կովու լիտր եղն միայն լիցի։

Արօաի այլ հարկ մի լիցի, զի այն իսկ են արօտականք որ հարկին։

Ոչխարք ի գառինս տասանորդեսցին. թէ հաճոյ իցէ աէ-րունեացն՝ ընդ ոչխարի փոխանակիցէ ըստ արժանւոյն։

Զիոյ և ջորւոյ և իշոյ մի՛ լիցի հարկ, զի նոքօր բազում անդամ ծառայէ դտէրունիս։

Ի տարեմուտս ըստ կարի ծառայեսցէ և յաւուրս տօնից։ Մի՛ լիցի։ Մի լիցի չէրուչէք բազում. այլ շիք լիցին անիրաւ սովորութիւնքն, զի և սահմանդ բազում և յուելորդ սովո-րութեանց եղեւ։<sup>1)</sup> Այս քաղուածքը որոշ հառկացողութիւն է տալիս գիւղացիների գըութեան մասին։ Հողն, ինչպէս Դատաս-տանագիրքն է ասում, պատկանում է իշխաններին և թագաւորին և փոխարէնը գիւղացիք պէտք է ոչ թէ միայն թուած հարկերը վճարեն, այլ և մի շարք անձնական ծառայութիւններ կատարեն։ Դատաստանագրքի թուած հարկերը հառտատում են Անիի արձանագրութիւններն, այնպէս որ ճշտութեան մասին կատած լինել չի կարող։ Անիի արձանագրութիւնները յիշում են ի միջի այլոց և հետեւեալ հարկերը.—Նպիսկոպոսի հարկ, դռնադիր, ոչխարի հարկ, ջրաղացի հարկ, այդու հարկ, բաժ(?) բամբակի հարկ, տասանորդ, կնիքի հարկ, կենդանիների հարկ, եկեղեցիների հարկ և այլն<sup>2)</sup>։

Այս հարկերից երեսում է, որ գիւղացիք բաւական ծան-քարեռնուած էին և բացի այդ, պարտաւոր էին մի շարք անձնական ծառայութիւններ կատարել։ Թէ ինչ չափի էր հաս-նում վերջինս, զժրախտաբար ճշգրիտ տեղեկութիւններ չկան։ Այսպէս գիւղացիութեան զբութիւնը բագրատուննաց շնչա-նում շատ ծանր էր, և այդ բացատրեում է նրանով, որ այդ ժամանակ առաջ էր եկել որոշ կալուածատիրութիւն, այսինքն՝

1) Ախութար Գօշ ա. ա. Օ եր. 544—546.

2) Ալիշան Շիրակ եր. 49.

ազնուականները սեփական գիւղատնահութիւն ունէին և իրենց կալուածքների վրայ աշխատեցնում էին գիւղացիներին։ Նոյն իսկ թագաւորն էլ ունէր իւր սեփական տնտեսութիւնն. այսպէս՝ խաղողի այգիներ, ոչխարի և եղջեւբաւոր անասունների հօտեր և այլն։

(Հարունակուի)

Հ. Մուսակենան



## ԽԱԶԱՏՈՒԻՐ ԱԲՈՎԵԱՆ

Հարունակութիւն

Անցնենք երբ քաղաքային ազգաբնակութիւնը շատ թոյլ է զարգացած, այն ժամանակ գիւղական ազգաբնակութեան մեծ մասը իւր կարիքներին բաւարարութիւն տալուց յետոյ չէ կարողանում իւր բերքերի համար սպառողներ գտնել։ Եթէ գիւղացին իւր կարիքներին բաւարարութիւն տալուց յետոյ աւելացածը մտածէ պահել, ոչ մի օգուտ չի ստանայ. նախ այն պատճառով, որ այդ բերքերը միւս գիւղացիներին պէտք չեն գայ, որովհետեւ նրանք էլ ունեն, և երկրորդ, որ նոյն բերքերը կարճ ժամանակից յետոյ կարող են փշանալ։ Սրանից առաջամնուէ փակ տնտեսութեան ժամանակ գիւղացու առատաձեռնութիւնը<sup>\*)</sup> Այս առատաձեռնութիւնը կրացակայէր, եթէ քաղաքային ազգաբնակութիւնը բաւականաչափ զար-

4) Dagbaschean, H. a. a. O. եր. 402.

<sup>\*)</sup> Նման կարծիքի ենք հանդիպում յայտնի սոցիոգուգատմագլուկ. Կառուցկու մի նոր աշխատութեան մէջ, որտեղ խօսելով հին հոռվածյեցոց հարուստների մասն նկատում է. «Հարստութեան կենդրանացումը մի քանի ձեռքբերում ցոյց էր տալիս ոչ թէ այն, որ արտադրական ոյժերը զարգացել են, այլ այն» որ հանոյք սահալու միջոցները հաւաքուել են այնպիսի առատութեամբ, որ առանձին անհատը հնարաւորութիւն չուներ ինքը սպասելու, եւ նրան ոչինչ չեր մնում անելու, բայց երէ բաժանել նրանց, ուրիշների հետ։ Հռովմեական կայսրների ժամանակ առատաձեռնութիւնը ամենաբեւելի առաջնորդիւններից մէկն էր համարւում։» Կարլ Կայտսկի, «Անտիկան միք, յօդեյտво и христіанство», пер. Н. Рязанова, СПБ, 1909. եր. 540.